

ԱՊՐԻԼԻ ԿՈՄՍՈՒՄԻՏԻՆ

Պոչտային համար	12 Պո.
Տարեկան	6 "
Նրա սահմանի	15 "
Համար ստեղծված	8 "

Անհիջի ի համար	3 սր.
Տարեկան	4.50 "

Պատկերակ սոցիալական
 իրեն երևան համար 40 ս.
 իսկ իրեն երևան համար
 20 սահմանի է. երև
 ին անհիջի անգլիական
 համար 20 0/0 գեղյ կրչ
 լայն

ստեղծված համար 40 սահմանի

ՇԱՐՋՈՒՄ

W. P. KALENCIARIAN,
 (Austria) Mechitaristen-Verlag
 7. R. KALENCIARIAN
 (Austria) Mechitaristen-Verlag

Համակ եւ պրակտիկ
 Մեխարիստիկ համար
 ցիկ

Редакция на вѣстникъ
 „Шаржумъ“
 Варна

Redaction du journal
 „Charjoum“
 Varna (Bulgarie)

Արասահմանի համար
 40 սահմանի

Պոչտային համար
 12 Պոչտային
 Պոչտային համար
 15 Պոչտային

Գրքերից եւ չին ցուցի

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՒԻՆ. ՔԱՂՎԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐՏՐԱԿՈՒԻ ՉՈՐԻՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

«ՇԱՐՋՈՒՄ» Ի ԲԱՏԱՆՈՐԻ ԳՐՈՒՆՈՂՐ ԲԱՏՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ՆՍՈՒՇՆԵՐ ՀԱՅՎԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻՑ

Անշուշտ մեր ընթերցողները, թեև բառական ձանձրանալով, ուղարկում են զարմորին այն հրապարակային պայքարի վրա, որը երկար ու բարակ յուզածնեցողով անարժույթի մէջ մղում են խոստովանող հայկական մասնաւոր վարձարան պահող Կոկտոր Կիտոնի Պ. Մ. Նալբանդեան և ուսանող, կամ ինչպէս նախորդական է ներկայացնում ուսանող թեան թիկնածու Պ. Տէր Զարեանը:

Մենք այդ երկար ու բարակ յուզածներին տեղ չէինք տալ, եթէ նրանք չը վերաբերէին մի հայկական կրթական հաստատութեան սպանին, որի տնօրէնի մասին շատ գովեստով են խօսելու և գովողների շարքում գտնվել է հենց այսօրվան հակառակորդը: Մենք յուզածները գետեղեցինք միայն այն նպատակով որ պարզի թէ՛ արդեօք իրապէս նախորդները շարժառանգ են և հայ մանուկների համար փաստարար մի անձնատուրութիւն, ու հայ ծնողները պարտաւոր են նրանից պահանջել, թէ ընդհակառակը նա գիտութեան զենքերով զինված մի պարոն է, որը ուզում է թէ՛ Սրբապետի ապրէ և թէ՛ իրեն համար այնպիսի մի գործ ստեղծէ, որով կարողանար մասամբ էլ իր ցեղին օգտակար լինել:

Եւ դժբախտաբար այդ կէտը մեզ համար գեա բարբոտի պարզված չէ: Մենք այսօր ոչ կարող ենք Պ. Նալբանդեանին Պ. Տէր Զարեանին ներկայացրած աֆերիստը ընդունել և հար ծնողներին քարոզել որ նրան չը յանձնեն իրենց զաւակներին, և ոչ էլ կարող ենք ապա խղճով ամենափին ասել, աւելք ձեր պատկան թին Պ. Նալբանդեանին, դա նրանցից հայ բարի և ճշմարիտ պայքարի կը պատրաստէ:

Եւ մեր այս վարձարանի միակ պատճառը այն է, որ անձամբ մտիկից չենք ձանձրում այդ երկու պարոններին էլ որոնցից մէկը կրթական սահմանափակ հիմնարկութիւնը արդէն աւարտած է, իսկ մյուսը այդ հաստատութեան մէջ է կամ ուզում է լինել կատարելագործվելու համար:

Մենք մեր առջեւ ենք դրած մի մասաւոր սերնդի, գոնէ պաշտօնապէս արդէն հասուն ներկայացողներին, և նորարարողին, գրանք իրենց կրթութեան շրջանին պէտք է ներկայանան և բարոյական և մարտնչական ներկայացուցիչներ, սակայն արի տես որ այդ երկու պարոնները, ճշմարտութեան անունով միշտ խօսելով իրարու այնպէս են ցեխոտում, իրենց համար իրական, իսկ մեզ համար ոչ պարզված այնքան փաստեր են բերում մէջ տեղ, որ մենք պարտաւորված ենք կամ երկուսին էլ ճշմարտախօս, մարտնչարար ընդունել, կամ երկուսին էլ ստախոսներ:

Բայց այդպէս անկարելի է: Անշուշտ զրանցից մէկն ու մէկը աւելի ճշմարիտ է խօսում, իսկ ուրիշ գտումը մենք այստեղից անկարող ենք կատարել, այն էլ իրենց յուզածներին միջոցով:

Ուստի մեր կարծիքով Պ. Նալբանդեանը աւելի լաւ կանէր հենց Լոզանում մի միջնորդ դպրոցի գաւտարան կազմէր իր գործի վարկը փրկելու համար. կամ թէ Տէր Զարեանը նոյն ձևով վարվէր հայ մանուկներին ու ծնողներին իրեն կողմից շարժառանգ հոշակված պարոնի ձեռքից ազատելու համար:

ՍԱՍՈՒՆԻ ԿՈՄՍՈՒՄԻՏԻՆ ԱՌԻՓՈՂ
 ԺԷ.
 Սասունցիին րիւնովը
 Եւ այսպէս բոլոր փրկակարները ազգագրաբաններն ու սրբաբացած իրա-

ները՝ կոնկրետով հայ իրականութեանը, սուրբանական վաւերաթղթերը՝ սեղմած ձեռքերին, «Սասունը մասնաւորի իրենց ժանգոտած եւ զիրարեկ զէնքերով զինուած, իրենց հրէշային կիրքերու զգուշի թափովը խուժանական գրոհներ սարգեցին ալ ու ձախ, որուն ակնաւորութեան կը լինէր դեռ:

Եւ չեմ ուզեր ծանրանալ «գողտտի կը պատրաստուինք կոր, շատ մարդեր ունինք, բողք եւ քէօր դանակ մը եւ մարդ մը չունենցող առ յիմարներուն անմիտ պահանջկոտութիւններուն վրայ:

Սասուն ունենալու ըլլային նէ՛ տանկ կը լար, սա չափ զէնք ըլլարնէ՛ տանկ կը լար իրենց անմտութիւններովը, առ վաւեր իրենց չանն է որ նետերնին կը բերեն զիրենք կատարել տարու համար, ու պարզապէս գունդ մսին չի հասնող փիլիք հոտած է մլառող կատուին տպաւորութիւնն է որ կը փողուն միամիտներուն վրայ անգամ:

Մարդիկ՝ երբ չի հաւանած գաղնակցականներուն եւ օտարներուն լուրերը իրարու քով կարկախով ճղակըտոր կը լլան տեղեկագիր մը դարձնել եւ իրենց օրկաններու անկերջ գատարկութիւնն ու գատապատելիութիւնը կը ճգնեն լցնել եւ իբրեւ սերկրէն իրենց եկած տեղեկագիրը՝ քչի ու կը լցնեն սպառնչութեամբ:

Մարդիկ՝ երբ մարդիկ, գաղտնի պատրաստութիւններ ունենալով իրենց մէկտեղ, մէկ թէք մարդ չեն մէջ տեղ հաներ վատագի պահուն եւ բնդհակառակը կը պահանջեն ուրիշներէն եւ երգաններն ալ դեռ քիչ կը գտնեն ատով արդէն գերեզմանին ձեռքով նին է որ կը փորեն...

Եւ գործի կենդանի փաստը ունեցողները ատոնց հանդէպ պարզապէս արգահատանք մը կ'ունենան...

Այլ եւս չեմ ուզեր խօսիլ. Սասունը պահանջուածն աւելի չի կըրնալ յաջողելուն մասին իր կոնիւնրուն մէջ, որովհետեւ պէտք եղածը ըսած եւ:

Սասունի գոթախտութիւններուն արիթմով առ վատերուն սարգած համարական Արշաւանքը մեր ուշադրութիւնը կը հրաւիրէ իր մէկ ծիծաղի յարձակումին վրայ...

Մտիկ ըրէք. մարդիկը, իրենց համարական ախրուանքը սրտաշարժ պարագաներով ալ զարդարելու համար՝ Սասունցիին բերնէն խօսելու միտոտութեան ալ ելան:

Ահա՛ թէ անսնք ինչ տեսակ լըրութիւններ կը ցուցադրեն իրենց զայնուովը:

Աղբար, կը ճշան անոնք, դեռ առ գաղնակցականները Սասունցիին բերնէն կը խօսին. ո՞վ բաւ որ Սասունցին ուզեց ինքնապաշտպան ըլլալ: Դէպքերն ու իրողութիւնները պէտք եղածէն աւելի ապացուցին թէ Սասուն մէջ պատահած ֆէտայական խլրտումները օտարամուտ եւ բռնապետի բաներ էին: Ա՛հ, ոչ կաւելցրնեն կեղծաւոր շեշտով մը, հազար անգամ ոչ, թոյլ պիտի չի տանք որ դրօշակները Սասունցի զսերբը զպարտեն...

Աս խոսքերը ըսողները յեղափոխական ալ կանուանեն ինքզինքնին, ո՛չ միայն յեղափոխական կանուանեն, այլ յեղափոխական օւկանձ մըն է ըսողը, եւ կը նեղանան, կը փրփրեն ամէն անգամ երբ կը քաշենք անոնց երեսէն առ կեղծ ըողը եւ ցոյց կուտանք անոնց հակապետութեանը եւ համարական գիրկընդխառնումը:

Տարիներու զպցին ու կոծին, անարգանքին, բռնաբարութիւններուն, ալան թալանին եւ արկուններուն, ի տես՝ առ անզգամներն ու վատերը, թողունք ապստամբութիւնն ալ անբնական եւ անտեղի կը գտնեն...

Եւ ասոնք յեղափոխականներ են... վատեր, անարգ վատեր:

Սասունցիին անունով եւ անոր բերնով կը խօսիք, լաւ, եւ ձեզի Սասունցի բերնով պատասխանեմ, գիտնալով որ փաստերէն խոյս տալը իրականութեան առջեւ սքեքրից յէօրցնելու, հայաստանցիին ձայնը արձամարելուն մէջ շատ վարպետ էք, այնքան վարպետ՝ որքան ձեր սերագործ հայրեններուն մէջն էք:

Սասունցիին անունով կը խօսիք, լաւ, եւ ձեզի խօսեցնեմ Սասունցին, եթէ դեռ պէտք թողուցեր են ատոր՝ «Մակարներու, Սասունցի կիներու, Հէթիւկցիներու» տուած ջախջախիչ ապականները:

Լսեցէք ուրեմն—
 1903 օգոստոս 16ին, Շէնք, գեղաչէն, Կլիէկիզան, Եւրոպական, Ախպէր եւ ուրիշ գիւղերու բնակիչները հաւաքաբար ներկայացուցին Անգլիոյ հիւպատոսին տեղեկագիր մը, ուր բառական մանրամասնօրէն թրուելով իրենց քաշած անհանգուրծելի տառապանքները, նետեւեալ խօսքերը կ'աւելցնէին—... «Իբրեւ կատապարութիւնը գարունէն ի վեր Շէնք գիւղի մօտ, Խ. կոչուած տեղը բնակ հաստատած է, անթիւ զփրփր կը գտնուին՝ նմանապէս պատրաստ մեր վրայ յարձակումի. Ս. Յովհաննէս եւ Ավօրցա վանքերուն, Բերդակ եւ Թաւ գիւղերուն մէջ, կատա-

վարութիւնը մարդիկ զրկեց քիւրտ աշխրհներուն եւ անոնցմէ նախկին տարիներէն աւելի մարդ բերաւ զմեզ պաշարէ : Թիւրքերը եւ քիւրտները մեծ ու պզտիկ կրսնն կը լսեն արդէն որ մեզ պիտի գան ջարդեն ու մեր ինչքերը գրաւեն :

«Թիւրքերու եւ քիւրտերու սպանալիքներէն եւ գործողութիւններէն, ստիպուած եղանք ձգել մեր գործերը, մեր արտերը եւ բոլոր մեր հարստութիւնը եւ ապաստանեցանք իսկաններու ստորոտը՝ սպանելով բոպէ առ բոպէ որ պիտի եւ վեր վրայ յարձակին : Մենք այժմ անհանդուրժելի դրութեան մէջ կը գտնուինք. սուսն տեղ չունինք, եւ կեանքի պէտքըու առարկաներէն զորիկ՝ աճ ու վախով պիտի երթանք քաղընել մեր արտերը, քիչ մանրել ցորենը եւ ուտելը : Ուտելիքի եւ հագնելիքի պակասութենէ՝ մեր եւ հոտերուն մէջ հիւանդութիւնը կը ճարակի : Քիւրտերը շարունակ ման կուգան մեր գիւղերուն բոլորտիքը եւ պզտիկ առիթ մը կը փնտռեն մեր վրայ յարձակելու, վերջնպէս կեանքը այլեւս անտանելի է մեզի համար :

«Քիւրտերուն ըսածին նայելով, կանազարու թիւնը կը ջանայ, որչափ կարելի է շուտ, քիւրտերը մեր վրայ յարձակուած ընել տալ, որպէս զի ետքը միտակ անոնք պատասխանատու ընեն : Ահէն որ զինուորական պետեր, համարիէ գնդապետներ են, մեր բոլորտիքը քիւրտերուն մէջ կը պտտին, կը գրգռեն զանոնք օգնութիւն եւ պաշտպանութիւն խոստանալով, եւ մինչեւ իսկ անոնց զէնք, վառող եւ գնտակ բաշխուած է :

«Մենք փոքրիկ ժողովուրդ մըն ենք, ճիշդ է, բայց եթէ կառավարութիւնը եւ քիւրտերը մեր վրայ յարձակին, մենք պիտի կուտինք մեր սեփական ուժերով մինչեւ մեր վերջին շունչը եւ պիտի պաշտպանենք մեր իրաւունքները Գիտենք թէ մինչեւ վերջը չի պիտի կրնանք դիմադրել, բայց կը գերադասենք մի անգամ ընդ միշտ վերջ մը Գիտենք թէ մինչեւ վերջին փութիւնը ՄԱՆՈՎ, քան թէ ոչխարի պէս խողխողուի կամ անպատիւ եւ գերի պէս ապրիլ կառավարութեան եւ բարբարոս քիւրտերուն ձեռքին մէջ :

«Եւ եթէ բանակը եւ աշխրհները երկար փնտռ մեր մէջ, մենք սուսնքս ալ պիտի մեռնինք կամ սովէն կամ ցրտէն եւ կամ պիտի ստիպուած ըլլանք շտկէ շիտակ յարձակիլ անոնց վրայ, կուր կանչելով զանոնք, այսպէս վերջ մը դնելով արդի ըզժմինն : ...»

Սասունցիին բերնովը կուգէին խօսիլ, նա՛ իրենց սասունցիին խօսքերը թող աչքերնին խօսեն :

Ատկէ փառաւոր ապտակ կը լլա՛յ, բայց կայ, առկէ աւելի փառաւորը եւ սրտապնդողը տեսանք դեռ քանի մը ամիս առաջ :

Արիւնը թաթխուած սասունցիին Մուշ էր իջեր, անօթի, ծարաւ, մերկ, սիրելիներ, կարիճներ կորսնցուցած, բայց ան աւ վիճակին մէջ հիւպատոսներուն առջեւ նոյնը չի կրկնե՛ց, իր պահանջներուն գոհացում չի արուելու պահուն չի սպասուածը. «Կոտելի»

Եւ ի՛նչ մեծ անջրպետ ...

Մինչդեռ արտասահմանի յեղափոխական՝ ստրկամիտները հանգիստ նստած՝ «կուղները», «անոնց ձեռք զէնք տողները» կը գատապարտեն, Սասունցիին աւ վիճակին մէջ անգամ

«Կոտելի» կը սպանոյ, եւ անէծքի, օղբոցնութեան պատասխանատուութեան բառ մը անգամ չի ուզեր յեղափոխականներու հասցէին :

Եւ աւ Սասունցիին անունովն է որ կը խօսին Համիտի ծառաները :

Հեռու կորսուեցէ՛ք, վատեր, վատեր, դուք ձեր թունաւոր շունչով կը պղծէք սասունցիին դիակները : չէ՞ որ աւ զիակները ոճրագործ-չահագործութիւններու ծառայեցիլու զգուս լիութեան մէջն էք :

Համիտական սարգաններու մերկացումը այժմ անհանդուրժելի էր վերջնաբար սակայն, յաջողով պիտի անդրադառնամ նորէն ստոր եւ յարակից պարագաներու :

Դեռ կան ըսելիքներ :

Յիւրաք

Յիւրաք

Միւնքիւն ԵՐԲ

— (0 0) —

ՆԱՍՏԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

Նորէն հակայեղափոխական կուկոցի ձայներ է որ կը հասնին մեր ականջին, նորէն Հնչակեան ազնաւներու խապտու կուկոցն է որ մեր ականջները կը խլացնէ ժամանակէ մը ի վերէ : Նորէն կարմիր Սուլթանին ամենամտերիմ բարեկամ թամբիք՝ եղած եւ իրենք զիրենք յեղափոխական անուանող համակերպականներու անճոռնի վայնասունէ որ կը լըսուի առիթն անդիէն, ու վերջնպէս նորէն ազգակործան պրօպագանտան է որ ձեռ առած են, հայութեան գլխուն փորձանք եւ զոյգ կարգ մը իմաստակներ լծե՛ց ժողովուրդը շարքել կուտան եւ այլն : Ամերիկայի մէկ գաղութէն միւսը կը փորձեն լսելի ընել տալ իրենց ողբանուագներու ձայները, եւ ստոր համար է որ անդուլ անդադար կը շարունակեն գիւլային ժողովները : Երբ աւելի ճիւղը թող հանգիստ ըլլալ իր քէօչիկն մէջ, եւ ուրախանայ որ առանց ուե է նկուկեան իրեն հլու ծառաները, յառաջ կուգեն տանիլ իրեն տարիներէ ի վեր փայտալի ծրարները, կոտորածի պատասխանատուութիւնը նետել հայ ժողովուրդի ու մասնաորակէս հայ յեղափոխականներու վրին :

Ձէինք կարծեր որ մարդիկ այսչափ ալ պիտի ստորնանային, որ չպիտի կարողանային զսպել իրենց կուսակցական կիրքն ու առտելութիւնը, ու յարգել հայրենիքի փրկութեան գործին համար իր կեանքը զոհող հայ քայլին, այո՛, չէինք կարծեր, եւ մտքերնուս անգամ չէինք անցնել նոյնիսկ վայրկեան մը, թէ պիտի գտնուին մարդիկ, եւ ան ալ յեղափոխական անուան տակ կծկտող մարդիկ, որոնք այնքան գառնութիւններէ եւ գալարումներէ յետոյ, դեռ երես պիտի ունենան եւ յաւակնին իրենք զի :

րենք ցոյց տալիքը անկեղծ յեղափոխականներ, եւ դաւաճաններ ներկայացնել իսկական յեղափոխականները, եւ այժմ ի՞նչ կայ, առկէ աւելի տխուր եւ առկէ աւելի յուսահատական : Մարդիկ որոնք ձգած են իրենց ամբողջ սուն ու տեղը եւ թողած հայր ու մայրը ու բոլոր եղբայրները եւ ինկած են սախէ սար, ձորէ ձոր ու յանձն առած ամեն տեսակ զրկանք հայրենիքի փրկութեան գործին սիրուն համար սյոգ մարդիկը, այդ նուիրուածները ներկայացնել իբր հազարապաներու եւ հազարաւորներու ու անխնայ հարուածել զանոնք, առիկայ, այո՛ առիկայ ոչ միայն անխնայ-ճութիւն է, այլևս ոճրագործութիւններէն ամենէն ստուկալին :

Գաղափարի տարբերութիւնը ու գաղափարի կուր մղելը ամէն պարագայի տակ ալ յարգելի է, սակայն երբ գաղափարի հակառակորդը կը կորսնէ իր լրջութիւնը ու աչնուութիւնը ու ոտքի տակ կուզէ առնել ամէն սրբութիւն, եւ կսկսի յառաջ մղել իր կուսակցական կիրքն ու առտելութիւնը, այն ժամանակ անխնայ կը լլա՛յ քեզի բացարձակ թշնամի, բայց ոչ գաղափարի հակառակորդ :

Այսօր Հնչակեան երկու հատուածները գաշնակցականներու գէ՛մ գաղափարի կուր չէ որ կը մղեն, այլ բացարձակապէս կուսակցական կրքի եւ առտելութեան այսինքն թշնամական, այս մասին փաստերը այնքան շատ ու պերճախօս են որ մենք հոս աւելորդ կը համարինք մանրամասնաբար յիշել, կը բաւէ որ յիշենք միայն անցեալ տարւայ ճիւղի ճիւղի նոր Հնչակեան մասնաճիւղի մէկ գաղափարական եւ սեւ շրջաբերականը (որ արդէն հըրատարակուեցաւ «Հայրենիք»-ի մէջ) որը կառավարկել իրենց բոլոր մասնաճիւղերուն որպէս զի «տէնօրակաւ» խումբ մը կազմակերպեն ու գնեն նահանգային վարչութեան տրամագրութեան տակ, իրենց հակառակորդները զսպելու համար, եւ ըրին ալ : Լօնտոնի մէջ գետին տապալեցին երեք հատ հին Հնչակեաններ, որոնք քիչ առաջ իրենց ընկերները էին, իսկ տէնօրիստական խմբի խմբապետ Չարեհ Գօշեան հիւանդ տղեկն ալ ժողովուրդի բողոքը շաւելցնելու համար Ծըրէզնօի նոր Հնչակեան մէկ հըրատարակային ժողովին մէջ աւտրճանակ արձակեց : Ու մենք որպէսզի աւելի մօտեն կարենանք գաղափար մը տալ մեր Պուլկարիոյ հայրենակիցներուն ու մասնաւորապէս «Շարժում»-ի յարգելի ընթերցողներուն : Հոս կը գնենք գաշնակցական ընկերութիւնը եւ հին Հնչակեան պարո-

նի մը միջեւ տեղի ունեցած աւելի խօսակցութիւնը : Դաշնակցական ընկերու երբ կը հարցնէր իրեն թէ ի՞նչու համար Սապահիւլ իրեն թող տուաւ Վօքէկնի մէջ, Սասունի եւ Անդրանիկի անունով գրած հանգանակել, չէ՞ որ դուք Սասունը ներկայ ինքնապաշտպան կուրները եւ Անդրանիկի գործունէութեան սխալ կը հաշտեցէք : Հին Հնչակեան բախտախնդիր պարոնը ի՛նչ պատասխանէ որ լաւ ըլլալ, ինչորեմ լաւ լսեցէք, — «այն ատեն երբ Սապահիւլը Վօքէկնի մէջ գրած կը հանգանակէր, Անդրանիկը սատկեւր էր, եւ Սասունը ջարդուեր : Ահա ձեզի գլուխ գործոց մը եւ ահա Հնչակեան կուսակցական կիրքը ու առտելութիւնը, այս ալլատերուած եւ մալուուածները Պուլկարիոյ շատ ու շատ աւելի պիտի ուրախանային, եթէ, ոչ միայն Անդրանիկը մեռնէր եւ Սասունը ջարդուեր, այլ եւ բոլոր այն քայլերը որոնք այսօր Դաշնակցութեան գրօշին տակ կը գործեն :

Այն օրէն երբ Սասունը ինքնապաշտպան կուրները սկսան կամաց կամաց նշաններ դուրս տալ, այն օրէն կըսեմ, հոս Ամերիկայի մէջ հնչակցակործանները սկսան իրար անցնիլ, տունէ տուն, ճաշարանէ ճաշարան, սրճարանէ սրճարան սկսեցին վազել վարկերի եւ իրենց բերաններուն մէջ յեղիցել «տեսէք ժողովուրդ, սա դաշնակցականները Սասունը կոտորուելուն պատճառ կը դաւնան :»

Պօսողնի մէջ հրատարակուող «Զայն վայրենեաց» ըսուած հայհոյակութիւնը իր խելքը կորոյտալիւս, եւ ինչ ընելիքը ու զըրբելիք չէր գիտէր, այն հայհոյակներուն կոյտերը որ կը թափուէին գաշնակցական անխնայ գործիչներու հասցէին, մարդամօթ կը զգոյն յոյն իսկ իր բերանը առնել, եւ ի՞նչ էր այդ բոլոր իրարարեցման շարժառիթը, շատ պարզ է, որովհետեւ այդ գործերը երեւան կուգային Դաշնակցութեան ջանքերուն շնորհիւ, անոնք պէտք էր որ անպատճառ հակառակէին, եւ այդպէս ալ ըրին արդէն :

(Շարունակելի)

Մի փոքր փոս Ուրիշին • ՄԵՋՐ Կ'ՆՅԱԾՍ — 0 — (Շար. 642 թիւէն եւ վեր)

Բ. րնկերների միջոցով (աղէկ ուղղակի բուլու համարձակութիւնը չեն ունեցիր) ցանկութիւն եւ յայտնած եղբր ուսանողական կամիտէին անգամ գրուելու, թէեւ ապրիլներէ վեր ուսանող ըլլալէ դադարած ըլլած : Որոնք են այդ ընկերները եւ օ՛վ

իրենց պաշտօն տուեր է իմ անու-
նովս ասոր անոր խօսքեր ընելու :
Ուստ է նաև երբ կրուի թէ ան-
գամակար հաւաքելին մերժած ը-
լամ անդամակար, այսինքն 3-4
Ֆրանքի ահեղի գումարը տալ : հա-
կառակ հաւաքիտական այնքան գոր-
չերուս : Երբ երկկոյթի ընդհանուր
հայերը ներկայացնել է ներկանե-
րուն : Պ. Տ. Ջաքարեան միայն բա-
ցակայ է ներկայացուած հայերին
նկատմամբ որ եւ է առարկութիւն ու-
նենալին մէկիկ մէկիկ հարցնել ու
ընդհանուր լուծելնէն վերջ դրամը
յաննցի կօմիտէին : յայտարարեցի
խոյն որ այլևս իմ պաշտօնը վեր-
ջացած էր ու ես այլևս որ եւ է ձայն
չունէի : Գործը կատարուած էր , ու
խօսքի ժամանակ չունէի , քանի որ
արդէն բաւականաչափ ծանր քրու-
նուած եմ : Սյ յայտարարութենէս
ետք միւս ներկաները յանձնուած
ստակին գործածութեան վրայ խթ-
նակցեցան , ու այս կէտին որոշու-
մէ վերջ անդամակարներու խնդիրը
մէլ անդ հանցին : Բնական էր որ
իմմէ ոչինչ չտուէր քանի որ ա-
նունս արդէն ընդունուած էր : Եւ ստա-
լին անգամ որ ուսանողական ժողո-
վին մասնակցեցայ երկկոյթի զբա-
րումներով պարապեցանք :

Գ. Շինուո նամակը կը փութայ
յայտնել թէ պ. Տ. Ջաքարեան ուսա-
նողական գանձարանին վճարած է իր
պարտքը : Իսկ , իզկպս , պարտն կամ
պարտներ , բացարձակ անկարելիու-
թիւն մը յայտնել կը փութաք հե-
լ հեւ . արդարեւ երկկոյթի բոլոր զը-
բանները , իրեւ գլխաւոր կարգադիր ,
ինձ յանձնուեցան եւ ոչ ուսանողա-
կան գանձարանին ու ես էի որ ա-
ն յանձնեցի դրամը , իմ կողմէն
մարտով պ. Տ. Ջաքարեանի ծախած
ստակներու դրամը , իր իսկ խնդ-
րանքին վրայ : Հայրին օրը ժողո-
վին ներկայ ըլլալու իսկ չէր համար-
ձակած : վախճալով որ իր խնդիրը
յն ընդունուած էր կատարելով , վեր-
ջես միայն մասնա-փոստով (կարծե-
րովս է) վերադարձուց այդ գումարը
ուկցած ուրիշ փոխառութեաններով :
Հիմա հրապարակաւ կը հարցնեմ՝
ի՞նչպէս կարելի է կօմիտէ անունս
սակ ի զէպս փութալ յայտնել այս-
քան ծիծաղելի ուստ մը : Ի՞նչ , մի-
թէ կօմիտէ եւ կօմիտէ բառերը իրա-
րու հետ կարելի է չփոխել , Իսկ
այդ Ե-Ս ուսանողներուն եւ ուսանո-
ղակներուն մէջ , որոնք Լոզանի ու-
սանողական կօմիտէն կը կազմեն ,
ընկալ արդեօք մէկը որ բարոյական
քաղցրութիւն եւ պարտականութեան
եւ արդարութեան տարրական զգաց-
ում բուսած բաներն ունենայ այս ա-
մօթալի արարքներուն դէմ բողոքելու
համար : Հակառակ պարագան մեծա-
պէս յաւանտեսական պիտի ըլլար :

Գ. Ջնքերու խնդրին գաղով կօ-
միտէն կը փութայ բաւականաչափ
պահանջուած մանրամասնութեան տեղ
խօսքով հարցնել երկու բառ կօմիտ-
տով : Համարուել է եղեր որ գփտակ-
ցողներէն շատ ինձ քերքեր ու
պաշտքի եմ , բարեբաղդարար իւրաց-
ուած կամ գրեթէ իւրապօսի խօսք
ընելու : Շատ բնական է որ խնդր
զուրկ մէկը գիտակցօրէն ընէ ինչ
որ կրնէ , ամէն մարդ Ջաքարեան
է : Բայց ինչու այս լակօնականու-
թիւնը ամէնէն կարեւոր հարցին նը-
կատմամբ , երբ ի զէպս գիտեն փո-
թալ երկարաբանել ու ուրիշ տղայա-
կան հարցերու առթիւ : Միթէ իրենց

խնդր սկսեր է թիշ թէ շատ ձայն
բարձրացնել : Շատ լաւ ես տամ ու-
րեմն պահանջուած մանրամասնու-
նեցրը : Ուստ կը ցաւիմ որ ստիպե-
ցին զիս երեւան հանել հայու ա-
նունին անարժան եւ իւրապէս ամօ-
թալի մի արարք : Մի փոքր փոս
ուրիշին , մէջը կիշնաս , կրնէ առա-
ծը :

Մարտ 5ի (չարաթ օր մը) երկկոյ-
թին կենդանի պատկերներուն հա-
մար պէտք եղած գէնքերը , զինուա-
ճառի մը հետ կանխաւ ըրած պայ-
մանադրութեանս համեմատ , երե-
կոյթի օրն իսկ մի քանի երիտա-
սարգելներու ոգնութեամբ բուսեցան :
Ուրիշ կարգադրութեաններով զբա-
ղած , ժամանակ ունեցած չէի սիւ-
սին երթալու , հետեւաբար մօտէն
տեսնելու առնուած զէնքերը : Եր-
կոյթալի առաջաւոր ընդհանրի մը
սայլակին վրայ գնել ապով տարի
յաննէն զանոնք զինուաճառին , ու-
րուն որդին զէնքերու ցուցակը
ձեռք մէկիկ մէկիկ նշանակեց զէն-
քերը երբ բեռնակիրը սայլակէն
ներս խանութ կը մտնէր : Երբ այս
գործողութիւնը վերջացաւ տղան ինձ
յայտարարեց որ բոլոր զէնքերը վե-
րադարձուած են : Ասոր վրայ վճա-
րեցի 8 Ֆր. իրեւ վարձք ու ընկա-
լագիրը առնելով զբաւեցայ երկկոյ-
թի սրահին , տպարանի , նուագա-
խումբին , մոզական լապտերին եւն ,
եւ կարգադրութեաններով :

Մի քանի օր կ'անցնէր եւ անա մի
ուսանող ինձ լուր կը բերէ որ երե-
կոյթի տեղը մնացեր են մի քանի ա-
տրճանակներ : Վստա՛ ըլլալով որ ին-
չիրը վերջնականապէս կարգադրուած
էր , ըսի թէ անոնք մերը չեն կրնար
ըլլալ ու հաւանականաբար ուրիշ ե-
րկկոյթէ մնացած են : Կրկին անգամ
միեւնոյն լուրը ինձ հասնելով աւելի
փստա՛ ըլլալու եւ կօմիտէի անտակին
համար անօգուտ ծախք չնկու համար
ուղղակի դացի զինուաճառին եւ հար-
ցուցի թէ իրենց գէնք կը պարտինք :
Սի , ամէն ինչ ճիշտ է՝ այս եղաւ
ինձ տրուած պատասխանը : Ասոր վը-
րայ բաւական ժամանակ անցաւ մի-
շու որ օր մը , երկկոյթի սրահին
առջեւէն անցնելով , զոնապանուհին
ինձ կ'ըսէ որ ատրճանակներ մնացած
էին մեր երկկոյթին : Շատ զարմա-
նալի էր շիտակի այս յայտնութիւնը .
բայց նկատելով որ քանի մը օրէն ս-
ինս մը Լոզանէն բացարձակ պիտի մը-
նայի , իտեմութիւն սեպտեմբերին ինձ մօտ
բերել տալ գանձն , որոնք հին
խոսքայ էին կամ եթէ կ'ուզէք 700
Ֆրանք արժողութեամբ հնութիւններ ,
որ երկկոյթներու եւ թատրոնին մէկ
քանի Ֆրանքով վարձու կը տրուին :
Անկարելի է չծիծաղել :

Ապրիլի վերջեր , Լոզան վերա-
դառնալով կ'ըզգայիմ ամիտէ մը տե-
ղի ունենալիք սմուսնութեանս պատ-
րաստութեաններով ինչպէս եւ դպրո-
ցիս եւ հրատարակելիք թերթի գոր-
ծերովը : Չեմ կարծեր որ ոճի մը
ըլլայ պահարանի մը մէկ անկիւնը
քնացող անվասնգ եւ յըսուած հնու-
թիւններուն վրայ մտածելու ժամա-
նակ ունեցած չըլլալու :

Յունիսի կէսին , երկրորդ բացա-
կայն թեմէ մը վերջ , կ'ըսկսիմ տե-
ղափոխութեան :

Ահա ճիշտ այս իրարանցումի մի-
ջոցին է որ երեսը պայտարներով լե-
ցուած երիտասարդ մը կը ներկայանայ
եւ կ'ըսէ թէ ինչ զինուաճառին կօմիտ-
տոմէտուն է եւ թէ ատրճանակներ մնա-
ցած են երկկոյթին : Մի քանի հար-

ցուցներով իր իսկութեան վրայ վըս-
տահութիւն պայտարներ , ետք իրեն կ'ը-
սեմ որ մէկ երկու օրէն վերադառնալ
ու ատրճանակները առնէ : Դժբաղ-
դարա՛ր իւրացումի կամ գրեթէ իւ-
րացումի գաղափարը միտքս չէ եկած ,
ապա թէ ոչ զինուաճառէն ստացած
ընկալագիրս նպատակիս իրագործու-
մը մեծապէս պիտի հնչեցնէր : Ինչ
եւ է , երեք օր վերջը դարձեալ կոնա-
տրմէտուն , այս կէտը միտք պահելու
է կուգայ եւ իրեն կը յանձնուի ձեռ-
քի տակ պատրաստ ատրճանակները ,
ու ինք օշտ լաւ , ճիշտ է՝ ըսելով
կը մեկնի :

Յուլիս 9-ին ուսանողական կօմի-
տէի կողմէն քարտուղար Պ. Տ. Ջա-
քարեանէն թշնամական ոգևով իրմ-
բազրուած նամակ մը կ'ըստանամ
(ինչորեմ մի ծիծաղիք երբ ըսեմ թէ
ինչորիքս արմենիէն հասցնով զըր-
կուած են նամակները) զինուաճառէն
կօմիտէին հասած նամակի մը պատճէ-
նովը միտին : Չէի կրնար չզարմա-
նալ այս երկու նամակներուն պարու-
նակութեան վրայ . իսկոյն հասկցայ
թէ մի էնտրիկ կ'ըստանայ : Ուղղա-
կի նամակով զինուաճառին կը բողո-
քեմ իրենին պարունակութեան դէմ ,
կը բացարձակ մանրամասնօրէն ամէն
ինչ ու իրեն կը հասկցնեմ որ այս ու-
շացման եւ դարձեալ մէկ ատրճանակ
մեզ մօտ մնալուն պատճառ իրենք
իսկ են , ու ես երբէք պաշտօն չու-
նէի ի գործիս մէջ կարգ կանոն
գնելու : Այս առթիւ կը յայտնէի թէ
մնացած ատրճանակն ալ , երկաթի
կարմր մը , ձեռք անցուցած ենք կա-
րելի է գալ անել : յուսալով լսել այս
առթիւ զիտակցօրէն ըսուած «ճիշտ է՝
մը : Այս ստակին պատճէնը կը զըր-
կեմ կօմիտէին , որ իրը պատասխան
ինձ կը գրէ թէ ինչու ուղղակի զի-
նուաճառին գրած է իր երբ ինք ար-
դէն անոր հետ բանակցութեան սեջ
էր : Վերջը պիտի տեսնեք այս ա-
ռարկութեան բուն պատճառը : Իսկ
զինուաճառը չպատասխանելու , միայն
յուլիս 28-ին իր 17-18 տղան կը զըր-
կէ հնութեան մնացորդը առնելու , ու
այս առթիւ տղան հետեւեալ խոստո-
վանութիւնը կ'ընէ . «Ներողութիւն
կը խնդրմ յուլիս 8 թուակիր նամա-
կին համար որմէ հայրս բնաւ տեղե-
կութիւն տեսցած չէ եւ որը ես ինքս
գրած եմ թուակցօրէն ուրիշ մը
ստիպողական թելադրութեան տակ ,
հակառակ որ բոլոր յանցանքը իմս էր
քանի որ ես էի ցուցակին վրայ նշա-
նակողը եւ ձեզ ըսողը թէ ամէն ինչ
ճիշտ է : կը հասկնաք թէ այդ տեսակ
նամակի մը բնաւ պէտք չկար նամա-
նաւանդ որ արդէն 6 ատրճանակներ
մեզ վերադարձուած էին , եւ այլն » :
Ու բացատրեց թէ այդ թելադրողը
ինչպէս իր հետ հաղորդակցութեան
մասն էր կօմիտէի միջոցաւ եւ թէ
ինչպէս գրել թելադրած էր : Յայտ-
նի էր որ հայրը բուական յանդիմա-
նած էր զինքը ըրածին համար :

Այնքան ապշեցայ այս լուսանկրէս
որ անոնց չէի հաւաքար : ու տղան
սինեակս կանչելով , ուր երկու հոգի-
ներ եւս կային , անոնց առջեւ կըրկ-
նել տուի իր բաձնները , Ու եօթեր
բողոք ատրճանակը , որուն 2 Ֆրանք
գին կը կտրէր , անշույտ իրքեւ հը-
նութիւն , միտին առնելով գնաց
նոյն օրն իսկ զրեւի ուսանողական
կօմիտէին եղելութիւնը ցոյց տալով
թէ ինչ ստորին էնտրիկ մը դարձած
էր , եւ յոյս յայտնելով որ այդ վատ եւ
անազնիւ արարքին հեղինակը հայ մը
չլիներ : Յայտնող օրը սակայն միեւ-

նոյն անձէն ցաւօք սրտի իմացայ ար-
մուծին մէջ եւ կաշակէն հարուածել
ուզող տխուր հերոսը զգալաբար
հայ մը եղած էր : Անոնք զբաւ
որովհետեւ իրմէ լուծեան խօսք առ-
նուած էր , այլ միայն անցնելն
է՛ր : Ի՞նչ ամօթ : Հիմա կը հասկնամ
այդ բոլոր ցած նշարկներու բոլոր
պատակը :

Ո՞վ է սակայն այդ տխուր եւ ցած
հոգի անձնաւորութիւնը : այն պարօզ
նր որ կօմիտէի մէկ ֆրոնտի մէջ
կօտորմէտուի փաստաբանական իրա-
ցած է ու անոր խղճիքը յայտն թե-
րած : Իրքեւ թէ զինքը չպա գէշ կեր-
պով բնութեան ըլլալու եւ փնքը եկած
չըլլայ առաջին անգամ զինքերը առ-
նելու : Ինչ որ ախար է ֆինչպէս ան-
տանք վերը :

Ահա իրողութիւնը , եւ եթէ տար-
բեր է թող կօմիտէն զինուաճառի
տղուն հետ ունեցած փոքր , յորիչ եւ
անհնակարեւոր բանակցութեան
հրապարակ հանէ , ծղարտութիւնը
լոյսէն վախճալիք տեղ չունի :

Այո՛ , կայ հայու սրտին անար-
ժան եւ անպատուութեան արարք մը
ու զայն պարօզ մը : Այսպէս է միշտ ,
ուրիշին փոս փորձը ինքքալէն կիշ-
նայ : Եւ քաղաքին երես ալ ունի
ինքզինքը ազգային պատգան նա-
խանախնդիր ցոյց տալու 6 Չեմ կր-
նար առաջ չբերել հետեւեալ տողերը
որ այս վարկեանիս իսկ ժընձվէն
ուսանողէ մը ստացած նամակէս կը
յարգեմ . «Կարգալով Պ. Տ. Ջաքար-
եանի եւ ձեր յօդուածները Շարժու-
մում քոնէ փոքր ինչ գործիք տեղակ
մարդը չի կարող չգտնել այդ իրողու-
թեան մէջ ինտրիքի խաղեր , անազ-
նիւ թշնամութիւն եւ իրողութեան ա-
նամօթ ուրացում : Ես երբէք կարող
չէի սպասել այդ ձի մարդու , թող
մի ուսանողից (սրա վրա աւելցրեմք
ձեւական յիպոփոխական լինելը) » :

Եւ ինչու այս ամէնը , ձաղաղութեւ ,
խարդախութիւն , ստորնութիւն :
Պարզապէս Լոզանի հայ ձեռնարկը տա-
պալել ջանալու համար , անա՛ բուն
նպատակը , ի՞նչ յաւանութիւն , եւ
անա՛ կեղծ ազգասիրութիւնը , ի՞նչ
ամօթ :

Եւ դու պիտու հերոս , որ այս-
քան ստորին դերի մը կատարումին
մէջ կը կարծէիր գտնել անձանօթու-
թեանդ խեցիկ խորտակելու միջոց ,
մտիք , զրպարտիչի մուրը ձակարդ ,
ու ուղղափառ մարդոց արձանաբան-
քը երեսիդ , մտիք լուսակնակած մօ-
տացութեան գերեզմանին մէջ , Գիտ-
ցիր թէ այս տեսակ կաշիճական ա-
րարքները չեն որ անքնութիւնդ պի-
տի մեղմացնեն , քանի որ ամէնչօք
խիղճը փշալի բարձ մըն է :

Մ. Նալբանդեան
Հայկազեան վարժարան
29 Սեպտ. 1904

ՅԱՐԸ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Միակ ուս ազատամիտ մասուր
չէ որ զժգոն է պատերազմէն եւ կը
մտածէ թէ «Մանջուրեան այդ շափ
գահողութիւն չարքեր :

«Տէյըր Մայրը թերթին Բեթերս-
պուրկի թղթակիցը հետեւեալը կը
գրէ .

Պատերազմին պատճառով Յարը
հիւանդացի է :

Կոտորումներուն նկարագրութիւն-
ներ , մանուսնայ Ռատրիվիով ին-
խանին պատմութիւնը Բօքթ-Արթ ուր

գերեզմանոցի մասին սարսափելի ազգած են: Ռատոգրիովին պատմութիւնը կարողացած ատեն նորին մեծութիւնը գեղեցիկ է մեծելի պէս և ժէնէրալ Սախարովին նկատելի է, ինչպէս և քանի մը սպաներու որոնք կը փառաբանեն եղեր Շթօսէլի մեծութիւնը հաստատակամութիւնը: ա. յո. բայց կրնամ ես ազգային մեծութիւնը այդպիսի սովորի և սարսափելի գնով մը գնել:

Սկստորածը շատ մեծ գին մըն է փառքի համար: բար է Յարրո: Օր ու գիշեր Յարրը կը հեծէ և կը հասալէ արիւննեղութիւններու և տանջանքներու անթիւ, որը ան մասամբ նեւեռանք կը կարծէ թոյլ վերանկողութեան: Շատ նիհարացած է, և իր կշիռէն կորսնցուցած ու հազիւ կը քնանայ:

Ազգի մտքը գինորներուն յարմարութիւններուն պատասխանելիքը դիտելու ատեն սրտանց չի աշխատիր և մէկ անգամէն աւելի ըսած է. «Եստուած ծաղրել է յաւակնիլ տանջանքները մեղմացնել, որոնք Երեմի չը պիտի պահանջուէին»:

Նարուհին որ կատէ պատերազմը երբէք չի դադարի Յարին բարենորոգումներ պահանջելէ: Ան իր ամուսինը անհանգիստ խողովելով, յուզուած և բարկացած կը տեսնայ միշտ, և կըրէ սայս ամեն քանի մը պարագայ մանջութեան քաղաքներու համար, որոնց անուններն իսկ չենք կրնար արտասանել:

Ասկայն պատերազմական կուսակցութիւնը գեո յաղթող պիտի մնայ, մինչեւ ժողովրդական շարժում մը ըսկսի ի նպաստ խաղաղութեան: Կայսրը ատանց այլեւայլութեան այդպիսի շարժումը մը գլուխը կանցնի:

Ատանց ատոր Յարին անձնական ատելութիւնը դէպի պատերազմը ոչ մի ազդեցութիւն պիտի գործէ գործերու ընթացքին վրայ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍԻԱ

Քիշինէվէն սեպտ. 27ին կը հեռագրեն թէ Յարին այդ քաղաքը այցելելը յետաձգուած է, որովհետեւ հրէաներու պատգամաւորութիւն մը տրամագրութիւն ունէր Յարին ներկայացնելու յիշատակագիր մը հակահրէական ցոյցին առթիւ եղած դատաւարութեանը մասին, որ վերջացաւ մարդասպաններուն ազատ արձակուելովը:

Մեծ իշխան Վլատիմիր Պերլին գացած է Յարի կողմէն կարեւոր յանձնարարութեամբ մը:

Սեպտ. 27ին Քիշինէվէն Վիէննա կը հեռագրեն թէ հակահրէական ցոյցի առթիւ եղած երկրորդ դատաւարութեանը որոշումով մարդասպանները ազատ արձակուած են:

Դատարանի նախագահը եղած է իշխան Մեդվեդով:

Նոյն թականին Վարշավայէն կը հեռագրեն թէ Լօտզ քաղաքին մէջ սօցիալիստները բռնակցութիւնը ապստամբութեան հրահրող կոչեր ցրուած են:

Վիէվէն կը հեռագրեն թէ նահանգապետ Կլէգէլս քաղաքէն բոլոր հրէաները դուրս վաճառած է: Սիւրի Պատո թալիւն մէջ բռնակող հրէաներուն թաղուցած է քաղաքին մէջ:

208 ուս փախտակուն գին ւորներ անցած են Աւստրիա Բուքովինայի քովէն:

Բեթերապուրկէն կը հաղորդեն թէ հրաման տրուած է որ Բալթիկեան ուսական նաւահանգիստներուն մէջ գտնուող բոլոր նաւերը խուզարկուին որովհետեւ վախ կայ թէ մտադրութիւն կայ ուսական նաւերը վառելու փորձեր ըլլան:

Յարը Քուրորաթքիին արտուած է իր նախագէտ կազմած նախագծին համաձայն շարունակէ պատերազմական գործերը:

Պատգամաւորութիւնը Ամերիկայի մեջ

Վաշինկթընէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ Միացեալ Նահանգներու նախագահին կողմէն հայոց կախողիկոսին պատերազմութեան սրբալիւր ընդունելութեան մասին:

Կոտորած Բալգայի մեջ

Մասնաւոր լուրերու համաձայն Սեբաստիոյ մօտ, Բամպա հայաբնակ գիւղը կտորածի ենթարկուել է քիւրտերու կողմէն:

Իրատէսով մը զէնքի կը կոչուին քաղաքի ընտրի վաշտեր, ուս սահմանազիւր մօտերը:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Ռուս հեռ. գործակալութեան Մուկտէնէն կը հեռագրեն թէ ճարոնական գործերը չուրկ ըլլալով կերակուրէ և զգեստներէ կը թաշեն շեմ մասամբ քրիտոնեայ և մահմեդական շինարարները: Ռուս ժէնէրալ Հուպէր հրամայած է Մուկտէնի նահանգի վառուած շիններուն տալ 50000 ըզգեստ:

ժէնէրալ Իրինպերկ Բեթերապուրկէն վերադառնալով Վիւննա, մերժեք է թերթերու թղթակցները ընդունել:

Սպայակոյտի սպայ մը երկրորդ զօրաբանակի մասին յայտարարած է թէ այդ բանակը չը կրնար կեդրոնանալ Մանչուրիոյ մէջ նախ քան մարտ ամիսը:

Լօնթօնի թերթերը կրմանան թէ Քուրորաթքիին որոշած է մասնաւոր բանակ մը կազմել խուճուկներուն դէմ գործելու համար: Խուճուկները պօէրնեբուն թարթիքով կը գործեն և մի զմուտրութիւն կը պատճառեն:

նեն գլխաւոր բանակին: Քօթթօնէն կը հաղորդեն թէ ճարոնացիք կը շարունակեն Ռ. Նրթուրի ուս նաւատորմի դրամակոծել, որին փախուստը այլեւս անկարելի է, որովհետեւ չորս նաւեր շափուցանց վառուած են:

Լօնթօնէն «Յայթի կը հեռագրեն թէ սեղակոն գիտակցող անակներուն մէջ կը վստահին թէ ճարոնացիներուն Մուկտէնի քով զարմանալի անգործութիւնը մտնովրա մըն է: ճարոնացիները պիտի թոյլ տան որ ուսները լաւ մը ամրանան Մուկտէնի մէջ և այնուհետեւ յանկարծակի յարձակում պիտի գործեն անկարելի դարձնելով ուսներուն փախուստը:

«Տէլլը Նիւս» թերթը Սին. միւնիսթէն կրմանայ թէ Մուկտէնի հարաւային ամրոյց սահմանին վրայ ճարոնական հետեւակ չօրքը արուեստի մասնովր միասին շտապով գիրքեր կը շինէ թնդանօթածիգերուն և հետեւակ չօրքին համար: Շատ նշաններ կը ցուցնեն որ այդ բոլորը միայն դարձուած մըն են, սքոյիլու համար Քուրօթքի մտածած մէկ շարժումը դէպի Արեւելք, որուն նպատակն է ուսներու նահանջին ճամբան կտրել:

Նյդ նպատակին համար Քուրօթքին ոչ չազրաւ օգնութիւն ստացած է:

Խաղախ սպայ մը որ Մուկտէն վերադարձած է բժշկուելու համար, կը պատմէ թէ Խարպինի առողջապահական կացութիւնը շատ գէշ է: Չինական թաղը լիքն է վարակիչ ցեխով, ուր կը թափառին խոզերը և կը պատառտեն դիակները:

Փողոցներուն մէջ վխտացող շները դիակներէն զատ ուրիշ կերակուր չունին: Չինացիները իրենց մեռելները չեն թաղեր և ազատ ձգելը աւելի լաւ կը համարեն, որովհետեւ շները կը կերակուրեն:

Չօրքերը Խարպին կեդրոնանալ սկսելէն ի վեր խիստ միջոցներ ձեռք առնուած են:

Լօնթօնի ճարոնական դիւսպակի կառմիքը

«Տէլլը Էքսօրթէս» թերթը իր մէկ թղթակցին ճարոնական դիւսպակին հետ ունեցած խօսակցութիւնը հրատարակած է:

Իեսպանը ուսական տեղիկութիւնները Թորթ Նրթուրի քովը ընկած ճարոնացիներուն մասին ճիշտ կընդունի: Կը հաւատայ որ ուսական նաւատորմի ձեռնարկը պիտի աշխատի փախչիլ, փախտ որ կը յայտնէ թէ Բօթթ. Նրթուրը պիտի իշխայ:

Ճարոնացիները գրամի փոխառութեան պէտքը չունին, որով:

հետեւ Ռուսիոյ հետ ունեցած պատերազմը ճարոնական տնտեսական աւելի բարձրացուցած է, զօրացնելով վաճառականութիւնը:

Իեսպանը կը ծագրէ ոգեւորվող տանգը՝ իր խօսքը վերջացնելով հետեւեալ նախադասութեամբ. «այսուհետեւ մեր քաղաքայ կոչը պիտի փոխարինուի հետեւեալով «ազատ վաճառականութիւն, ազատ շուկայ»:

Արեւիստ գներու կազմակերպումը

Ճարոնացիները խուճուկները հետեւեալ կերպով կազմակերպած են:

1. Քանի մը հազար հոգիներ խումբերու վերածուած ճարոն հրամանատարներով պիտի խորտակեն երկաթուղային գիծերը:

2. 2—3 հարիւր հոգիէ կազմուած խումբեր, որոնց նպատակը պիտի ըլլայ արգելք հանդիսանալ ուսական պաշարներու տեղափոխութեան և օգնել այն խուճուկ խումբերուն, որոնց յանձնուած է ճարոնական զօրքին պաշար հայթայթելը: Վերջին տեսակ խումբերուն մէջ 125 խուճուկի հետ 25 ճարոնացի պիտի ըլլայ:

Այս կազմակերպութիւնը ոչ միայն ուսներու կապիլէ կաննաւորապէս պայտ մատակարարել Մօնթրիլայէն ալ և զանոնք կտրիպէ մօնթրիլայէն սահմանները պահպանելու համար չօրք զրկել:

ՉԻՆԱՍՏԱՆ

Պերլինի թերթ մը Եանխայէմ կրմանայ թէ այլեւս կասկած չը կայ որ շինական գաղտնի ընկերութիւնները եռանդուն գործունեութեան մէջ են:

Եւրոպացիները ընդհանուր կտորածէ կը վախնան: շինարարները զէնք և պաշար կը մթերեն:

ԲԱՎԱՆՆԱՆԻՆԵՐՈՒՆ

Տարին վերջանալու մօտ է և մեր բաժանորդներէն շատերը գեո իրենց բաժնեգրները չեն վճարած:

Կան և այնպիսիներ որոնք երկու տարեկան պարտք ունին: Ինչպէս կերելի այդ մարդիկը կը կարծեն թէ մենք թողիք տէմբրը ձրի կառնենք, գրաշարները ու ապարաններն ալ ձրի կաշխատին և մենք հաց չենք ուտեր: այլ օքով կապրինք:

Քիչ մը ազնիւ ըլլալու են մեր չը վճարող բաժնետիրները, մասնաւոր անոր համար որ մենք երբէք առանց բաժանորդներու պահանջին թերթ չենք զրկեր մարդու: Պահանջողը և իր պատակասութիւնը կատարելու տարրական զգացուէն ձգուի չը պիտի ըլլայ:

Отговорникъ Мурадъ-Ераносиъ Печатница „Важность“ Варна